«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ռաֆֆու «Սամվել» պատմավեպի ուսումնասիրությունը նոր մոտեցմամբ . վեպի ուսուցման արդյունավետության բարձրացումը ինտերակտիվ մեթոդների և ՏՀՏ կիրառմամբ

ԱՌԱՐԿԱ՝ Հայ գրականություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Անահիտ Վանիչկայի Բարխուդարյան

ՄԱՐԶ՝ Լոռի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Բազումի միջնակարգ դպրոց

ՂԵԿԱՎԱՐ՝ մ.գ.դ., դոցենտ, ՌԲԱ պրոֆեսոր, Ա.Մ. Ծատուրյան

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն---------- 1

Ռաֆֆու «Սամվել» պատմավեպի ուսումնասիրությունը նոր մոտեցմամբ .

վեպի ուսուցման արդյունավետության բարձրացումը ինտերակտիվ

մեթոդների և ՏՀՏ կիրառմամբ ---------- 8

Եզրակացություն ---------- 21

Օգտագործված գրականության ցանկ ---------- 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«21-րդ դարում հանրակրթությունը նպատակ ունի ձևավորելու որոշակի կարողունակություններով զինված հայ քաղաքացի, որը պատրաստ է դիմագրավելու ցանկացած փոփոխության, քննական վերլուծության ենթարկելու իրադրությունը, քայլեր մշակելու, փոփոխություններ առաջարկելու, գործելու հանուն հանրության, հանուն իր երկրի բարօրության, պետականության ամրապնդման և բարգավաճման:

Այս պարագայում հայոց լեզվի և հայ գրականության դասավանդումը բացառիկ դեր ունի անհատի, քաղաքացու արժեքային համակարգի ձևավորման գործում: Ավագ դպրոցում հայ գրականության առարկայի դասավանդման նպատակը գրական ստեղծագործությունների ուսումնասիրությունն է, որի ընթացքում գիտելիքներ հաղորդելուց բացի ձևավորվում են քննադատական վերաբերմունք, գրական երկերը ընկալելու, վերլուծելու , գնահատելու, տվյալ գրական երկում այսօրվա ոգուն համապատասխան երևույթներն առանձնացնելու, հերոսների արարքների հիմքերը նկատելու, ապրումակցելու և հիմնավոր պատճառաբանություններ տալու կարողություններ: Գրականության դասավանդումը նպաստում է սովորողի հոգևոր և մտավոր զարգացմանը, նրա բարոյական նկարագրի ձևավորմանը» [1]:

Հիմք ունենալով հանրակրթության պետական և հայ գրականության առարկայական չափորոշիչները՝ ուսուցման գործընթացը պետք է կազմակերպել այնպես, որ ուսումնառության ընթացքում ձեռք բերված գիտելիքները, ձևավորված կարողությունները, հմտությունները, արժեքներն ու դիրքորոշումները հնարավորինս կիրառվեն առօրյա կյանքում, տարբեր իրավիճակներում սովորողները կարողանան արագ և արդյունավետ կողմնորոշվել, արձագանքել և առաջարկել լուծումներ: Նշված կարողունակությունները կարող են ձևավորվել ու զարգանալ ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի , գործունեության տեսակների, տեխնոլոգիաների, մեթոդների կիրառման արդյունքում:

Կարծում ենք, որ թեմայի՝ ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ ուսուցումը կնպաստի սովորողների ընթերցասիրությանը, դասապրոցեսին կհաղորդի ակտիվություն ու հետաքրքրություն ուսուցանվող նյութի նկատմամբ, գիտելիքների

ձեռքբերման գործընթացում կապահովվի սովորողների ակտիվ ու անմիջական մասնակցությունը:

Կզարգանա սովորել սովորելու կարողունակությունը: Սովորելու ընթացքում աշակերտների մեջ կձևավորվի իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ:

Վեպի ուսումնասիրումը նոր մոտեցմամբ կնպաստի միջառարկայական կապերի ստեղծմանը, նյութը համակողմանի ուսումնասիրելուն:

Հետազոտության նպատակը համացանցային տեղեկույթի և գեղարվեստական գրքի միջև անհրաժեշտ կապի ստեղծումն է , որը կհետաքրքրի սովորողին, սեր արթնացնի գրքի ու ընթերցանության նկատմամբ: ՏՀՏ-ի կիրառումը կնպաստի ուսուցման որակի բարձրացմանը, դրանց կիրառմամբ դասը կդառնա հետաքրքիր ու տեսանելի:

Դասընթացի առաջարկվող տարբերակով ուսուցման ընթացքում կձևավորվեն նաև մի շարք կարողունակություններ, որոնք անհրաժեշտ են սովորողին հետագայում: Նրանք կկարողանան ինքնուրույն գիտելիք ձեռք բերել, սովորածը գրագետ շարադրել և ներկայացնել լսարանին, համագործակցել ու հաղորդակցվել գործընկերների հետ:

Չափորոշչային պահանջը փորձենք ներկայացնել Ռաֆֆու «Սամվել» վեպի ուսուցման օրինակով:

Պատմավեպի ուսուցման ընթացքում կզարգանան սովորողների ստեղծագործական կարողություններն ու երևակայությունը: Վեպն ուսումնասիրելով՝ յուրաքանչյուր սովորող հնարավորություն կունենա համեմատել բնագիրն ու սկզբնաղբյուրը, գեղարվեստական երկում և պատմական ժամանակաշրջանում կատարված իրադարձությունները: Սովորողները կկարողանան կերպարը ստեղծագործաբար վերլուծել, իրենց տեսակետը հստակեցնել և արտահայտել, երևակայությամբ 4-րդ դար տեղափոխվել և անձամբ գործողությունների մասնակիցը դառնալ / «Եթե ես լինեի...»(Մեկ դերասանի թատրոն) /:

Քանի որ գրական նյութի ուսուցման նպատակը ոչ միայն գիտելիք տալն է , դրանով աշակերտին զինելը, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ՝ արժեքներ

ձևավորելը, ուստի, ուսուցչի առաջնահերթ խնդիրներից պետք է լինի հայրենասիրության մասին ամբողջական պատկերացում տալը, հայրենասիրության դաստիարակումը :

Վեպի « Հառաջաբան»-ում Ռաֆֆին գրում է.«**Խրախուսվելով այն գաղափարով, թե որքան մեծ կրթողական ազդեցություն ունի պատմական վեպը ընթերցողի համար, երբ նա տեսնում է յուր նախնյաց մեծագործությունները և աշխատում է հետևել նրանց առաքինություններին, տեսնում է նրանց մոլությունները, աշխատում է հեռու պահել իրան նրանց կատարած սխալներից...**» [2, 8]:

«Մի լավ գիրք կարող է փրկել մի ամբողջ ազգ...»: (Ռաֆֆի)

Կարծում ենք , որ այդպիսին է «Սամվել» պատմավեպը: Վեպի դրական կերպարների ուսումնասիրությունը, նրանց արարքների հիմնավորումներն ու վերլուծությունները կնպաստեն սովորողի մեջ հայրենասիրություն դաստիարակելուն: Պատանին կճանաչի ու կսիրի իր հայրենիքը, նրանով և նրա համար կապրի, իսկ անհրաժեշտության դեպքում հանուն հայրենիքի անձնազոհության կգնա:

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը:

Վեպն ուսումնասիրվում է 10-րդ դասարանում: «Ռաֆֆի» թեմային ծրագրով հատկացված է 8 ժամ, որից 6-ը նպատակահարմար ենք համարում հատկացնել վեպի ուսումնասիրմանը՝ հետևյալ բաշխումով.

1. Ռաֆֆու ռոմանտիզմը: Գաղափար պատմավեպի մասին:

2.«Սամվել» պատմավեպի հիմքը, գրության շարժառիթը:

3. Կառուցվածքը, սյուժեն և բովանդակությունը, գաղափարը

4,5,6. Պատմավեպի կերպարները/ վերջին դասաժամը՝ «Մեկ դերասանի թատրոն» /

Կարծում ենք, որ բնագրի խորազնին ուսումնասիրությունը կարևոր է, որովհետև Ռաֆֆու «Սամվել» վեպը հայ դասական պատմավեպի գեղարվեստական խոշոր նվաճումն է: Ըստ գրականագետ Ս.Սարինյանի՝ «Ռաֆֆին «Սամվել» վեպում

վերծանեց IV դարի երկրորդ կեսի հայոց պատմության իրադարձությունները։ … Չորրորդ դարը բեկման մի չափազանց յուրահատուկ ժամանակաշրջան էր հայ ժողովրդի պատմության մեջ։ Արտաքին և ներքին քաղաքական կյանքում տեղի ունեցան իրադարձություններ, որոնք շատ կողմերով նախանշեցին գալիք դարերի պատմության ընթացքը»։[3,33]

Վեպում արտացոլված է մարդկանց հոգեբանությունն ու կյանքի փիլիսոփայական հայեցակետը, իրադարձություններ, որոնք նշանակալից են եղել հայ մարդու համար։ Հավատն ու լեզուն պահպանելու , հայ մնալու օրհասական իրավիճակում հայտնված ժողովրդի համար անհանգստացող, հայրենիքը հզորացնելու տեսլական ունեցող կերպարների ամբողջություն է վեպը, ուր ներկայացվում է, թե ռամիկից մինչև իշխան ու արքա ինչպես են պատկերացնում հայրենիքին ու ժողովրդին սպառնացող վտանգը, ինչքանով են պատրաստ դեմ դուրս գալ դավաճան նախարարներին, որոնք հանուն իրենց շահի՝ Շապուհի ձեռքում դարձել են մի «անարգ գործիք»։ Իրենց անձնական շահը «մեծ գործեր» համարող հայրենադավներ, որոնք պատրաստ են զոհաբերել անգամ հարազատ ու սիրելի մարդկանց։

Վեպի ուսումնասիրումը կիրականացվի ինտեգրված ձևով՝ այլ առարկաների հետ միասնացման կամ միջառարկայական կապերի ապահովման սկզբունքով։

Առարկայախմբեր՝ առաջնային՝ հայոց լեզու, գրականություն,

երկրորդային՝ պատմություն, արվեստ

Ուսուցման արդյունքում սովորողները կիմանան պատմավեպի սյուժեն, գրական գեղեցիկ հայերենով կներկայացնեն կերպարների բնութագիրը, իրենց կփորձեն որևէ կերպարի դերում։

Կձևավորվեն սեփական ուսումնառության գործընթացն արդյունավետ և որակյալ կազմակերպելու, ստացած գիտելիքները կիրառելու հմտություններ։

Թեմայի արդիականությունը և գործնական նշանակությունը

Գաղտնիք չէ, որ սովորողների մեջ բացակայում է ընթերցասիրությունը։ Իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը նրանք ստանում են համացանցից և հեռանում գրքից։ Իսկ մեծածավալ երկերը շատ քիչ աշակերտներ են ընթերցում, որով էլ

պայմանավորված են այն դժվարությունները, որոնք հանդիպում են ուսուցման գործընթացում: Սովորողներն անգիր արտասանում են դասագրքի համառոտ վերլուծությունը և փորձում բավարարվել այդքանով: Մինչդեռ յուրաքանչյուր հայրենասիրական երկ խոր ուսումնասիրության կարիք ունի:

Այսօր դպրոցահասակ պատանիներից շատերը վախով են նայում մեծածավալ երկերին, դրանց ուսումնասիրման ժամանակ ցուցաբերում անտարբերություն: Ուսուցման գործընթացում դասավանդողը կանգնում է մի շարք դժվարությունների առջև, որոնք անհրաժեշտ է հաղթահարել:

Կարծում ենք , որ առաջին հերթին անհրաժեշտ է հիմնավորել նյութի ուսուցման կարևորությունը, որովհետև վեպում արտահայտված իրադարձություններն ու կերպարների մտքերը, գործողություններն արդիական են նաև այսօր: Հայրենիքի ու հայրենասիրության գաղափարը պիտի առաջնային լինի բոլոր ժամանակներում ու յուրաքանչյուրի համար:

Եթե մինչև հիմա հայ պատանին միայն պատմություններով գիտեր իր ժողովրդի կյանքում կատարված ողբերգությունների, պատերազմների ու թշնամիների մասին, այսօր նա դրա ականատեսն է դարձել, շատերի ընտանիքներում պատերազմը թողել է անդառնալի կորուստներ: Համոզված ենք, որ վեպի ճիշտ մատուցումը կնպաստի ապագա հայրենասերների դաստիարակությանն ու հայրենիքը պաշտպանողի բարձր հոգեբանություն ունեցող անհատի ձևավորմանը: Ժամանակակից մեթոդների ու ՏՀՏ կիրառմամբ կարող ենք ուսուցման պրոցեսը դարձնել հետաքրքիր, որն էլ իր հերթին կնպաստի ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Ուսումնասիրության առարկան , նպատակն ու խնդիրները

Ուսումնասիրության առարկան ավագ դպրոցում մեծածավալ երկը՝Ռաֆֆու «Սամվել» պատմավեպը, նոր մոտեցումով ուսումնասիրելն ու դրա ուսուցման արդյունավետության բարձրացումն է ինտերակտիվ մեթոդների և ՏՀՏ-ի կիրառմամբ:
Որպես կանոն ընդունված է վեպի սյուժեն ներկայացնել հենց սկզբի տողերով: Առաջարկում ենք վեպի ուսումնասիրությունը սկսել «Անուշ բերդ» գլխով : Վեպի սյուժեի այս մատուցումը սովորողներին պատմական դեպքերին տեղեկացնելու նպատակ է հետապնդում: Հայրենիքը սկսվում է հայրենասեր արքայից, որ ուներ

ամուր ու հզոր հայրենիք կերտելու, կենտրոնաձիգ պետություն ստեղծելու իր տեսլականը: Արշակ Բ արքային ոչ միայն գեղարվեստական կերպար կներկայացնեն, այլև պատմական անձ, որն ի շահ հայրենիքի պատրաստ է անձնազոհության: Կարևոր ենք համարում ուսուցման ընթացքում ուշադրություն դարձնել նաև այն կերպարներին / երկրորդական/ , որոնց վերլուծությունը դասագրքում բացակայում է, սակայն պակաս հայրենասերներ չեն և իրենց արարքներով հայրենասիրության վառ օրինակ կարող են ծառայել:

Արդյունավետ ուսուցում ապահովելու համար անհրաժեշտ ենք համարում՝

- Հիմնավորել՝ ինչու՞ է անհրաժեշտ ուսումնասիրել թեման և սովորողներին նախապատրաստել երկի ուսուցմանը,
- Ընտրել համապատասխան մեթոդներ, որոնք կնպաստեն հետաքրքրության խթանմանն ու ուսուցման որակի բարձրացմանը, նյութը սովորողներին դյուրընկալ ու մատչելի դարձնելուն,
- Ուսուցման գործընթացին մասնակից դարձնել բոլոր սովորողներին, կազմակերպել դերային խաղ
- Թեմայի ավարտին վերլուծել նպատակին հասնելու համար ընտրված մեթոդների տեղին լինելը

Գլուխ 1

1.1 Ռաֆֆու ռոմանտիզմը: Գաղափար պատմավեպի մասին:

Սովորողներին անհրաժեշտ է ներկայացնել ուսումնասիրվող թեման և հիմնավորել, թե ինչու է անհրաժեշտ դրա ուսումնասիրությունը:

Ուսումնասիրելով Ռաֆֆու «Սամվել» պատմավեպը՝ սովորողները այն կներկայացնեն որպես ռոմանտիզմի մեթոդով ստեղծված երկ, որի գաղափարը հայրենասիրությունն է: Կտեսնեն վեպի գրության, պատկերված դարաշրջանի և ներկա օրերի նմանությունն ու կփաստեն, որ վեպը չի կորցրել իր արդիականությունը:

Ուսուցիչը բացատրում է , որ «Սամվել» վեպը ճիշտ և ամբողջական ընկալելու համար շատ կարևոր է պատկերացնել ստեղծագործության մեթոդը /գրական ուղղությունը /, որով առաջնորդվել է հեղինակը: Անհրաժեշտ է՝

ա) բացահայտել թեմայի վերաբերյալ սովորողների ունեցած գիտելիքները,

բ) խթանել նրանց հետաքրքրությունը,

գ) սովորողներին նախապատրաստել նոր գիտելիք ձեռք բերելուն և կիրառելուն:

Իսկ ի՞նչ է իրենից ներկայացնում գեղարվեստական մեթոդն առհասարակ: **§Գեղարվեստական մեթոդ են կոչվում կյանքի փաստերի ընտրության, տիպականացման հիմնական սկզբունքները, որոնցով ղեկավարվում է հեղինակն իր աշխատանքում» [4]:**

Այլ կերպ ասած՝ մեթոդը կյանքի ճշմարտությունը վերարտադրելու ուղի է, իսկ մեթոդի ընտրությունը բխում է գրողի աշխարհայացքից, նրա տաղանդի առանձնահատկությունից:

Դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից մեկը **մտագրոհն** է: Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը:

«Կարևոր է նաև, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները» [5, 27]:

Ուսուցիչը նշում է, որ սովորողները ծանոթ են գրական ուղղություններին, առաջարկում է վերհիշել և մտագրոհի միջոցով ներկայացնել դրանք՝ նշելով յուրաքանչյուրին բնորոշ բնութագրիչներ:



Գրի են առնվում բոլոր մտքերն ու գաղափարները:

Իմաստի ընկալման փուլում վերհիշելու են իրենց դասագրքի «Գրական ուղղություններ» նյութը [6, 110]:

Ձևավորվում է 3 խումբ: Կատարելու են փոքրիկ հետազոտական աշխատանք, որի նպատակը ոչ միայն գիտելիք ձեռք բերելն է, այլև համագործակցային,

ժողովրդավարական կարողունակություններ զարգացնելը: Յուրաքանչյուր խումբ ուսումնասիրում է մեկ գրական ուղղություն , որի մասին ելույթով հանդես է գալիս խմբի կողմից ընտրված սովորողը՝ անհատը : Ելույթից հետո նրան տրվում են հարցեր: Պատասխան չլինելու դեպքում աջակցում են խմբի անդամները:

Ներկայացվածի և իրենց նշումների միջև գտնում են ընդհանրություններ և տարբերություններ, սխալի դեպքում կատարում ուղղումներ և մտապահում:

«Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար» [5,21]:

Ուստի,ուսուցիչը հանդես է գալիս ռոմանտիզմի մասին կարճ դասախոսությամբ՝ օգտագործելով իր կողմից պատրաստված սահիկաշար՝ «Գրական մեթոդներ»:

https://docs.google.com/presentation/d/1wItLX9zZ2FiS4OjBvcWq5BO7N0LctpMPB-rW8Z3Ff9w/edit?usp=sharing

Ռոմանտիզմը բխում է իրականության և իդեալականի սուր հակադրությունից: Իրական կյանքում չգտնելով իդեալներ՝ գրողը դիմում է երևակայությանը և կերտում ցանկալի պատկերը: Իրենց հոգեբանությամբ , խառնվածքով ու բնավորությամբ ռոմանտիկ կերպարները միշտ բարձրանում են մյուսներից, հեղինակը հերոսներին շրջապատում է խորհրդավորությամբ և անորոշությամբ, բարձրացնելով իրականությունից՝ օժտում է բացառիկ գույներով:

Այս ակնարկից հետո ուսուցիչը ներկայացնում է հայկական ռոմանտիզմի մասին տեղեկություններ: Նշվում է, որ խոր և երկարատև է եղել ռոմանտիզմի ազդեցությունը 19-րդ դարի հայ գրականության վրա: Ռոմանտիզմի առաջին արտահայտությունը Խ.Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպն է: Այն ավելի լայն տարածում գտավ 19-րդ դարի երկրորդ կեսում՝ հատկապես Ռաֆֆու ստեղծագործություններում: «Ռաֆֆին համոզված էր, որ իր ստեղծած տիպարները ներկայում դեռ ծնված չեն, բայց հայտնվելու են ապագայում:Հենց այդպիսի հերոսներ են նրա «Խենթը», «Կայծեր» վեպերի հերոսները, որոնք իրենց կյանքը նվիրում են հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին» [7, 92]:

Ուսուցիչը հիշեցնում է, որ 8-րդ դասարանում ուսումնասիրել են Ռաֆֆու «Խենթը» վեպից մի հատված, որի գլխավոր հերոսը՝ Վարդանը, գրողի իդեալ կերպարն

է: Այնուհետև հավելում է, որ «Սամվել» պատմավեպի համանուն հերոսը նույնպես իդեալ կերպար է: Որպեսզի ասվածը վերացական չհնչի, օգտագործվում է արդյունավետ ուսուցման յոթ մոտեցումներից «Պատկերի և տեքստի համադրումը»:

«Մենք ապրում ենք մի ժամանակում, երբ պատկերներ ստեղծելու հնարավորությունները մեծացել են: Արդյունքում մարդիկ ավելի լավ են յուրացնում այն ամենը, ինչը ուղեկցվում է պատկերներով: Դրանք կարող են լինել նկարներ, լուսանկարներ, գծագրեր, գծապատկերներ: Հետևաբար՝արդյունավետ ուսուցման գործընթացում պարտադիր է տեքստի, խոսքի ուղեկցումը պատկերներով»: խաչ 18



Գրական մեթոդներից հետո հարկավոր է խոսել գրական սեռերի և ժանրերի մասին / գրական սեռերը՝էպիկական, լիրիկական, դրամատիկական / ՝ հիմնական ուշադրությունը դարձնելով էպիկական սեռին :



Էպիկական սեռի ժանրերից մեզ հետաքրքրում է վեպը, որ ներկայացնում է հասարակական և անհատական կյանքի լայն պատկերը: Ի տարբերություն վիպերգական մյուս ժանրերի / վիպակ, պատմվածք նորավեպ, հեքիաթ/, վեպը սովորաբար ավելի մեծ ժամանակաշրջան է ընդգրկում, ունի սյուժետային շատ գծեր և բազմաթիվ հերոսներ: Վեպը համարվում է համադրական գրական ժանր, քանի որ դրանում ներկայանում են տարբեր դասակարգի պատկանող տասնյակ, երբեմն հարյուրավոր գործող անձիք թե՛ բնական իրադրություններում և թե՛ հասարակական լայն ֆոնի վրա:Այս ամենով հանդերձ՝ վեպը չի կարելի դիտել որպես առանձին

նովելների կամ պատմությունների միասնություն, դրանք մեկ ամբողջություն են կազմում գաղափարների և թեմաների շնորհիվ։

Հենց «Սամվել» վեպն իրենց վերնագրերն ունեցող տարբեր գլուխներից կազմված երկ է։ Սրանք առանձին մասեր են և տարբեր իրադարձություններ են պատկերում, բայց միևնույն ժամանակ ամբողջի անբաժանելի մաս են կազմում, որովհետև փոխկապակցված են միմյանց հետ։ Վեպի մասին հանգամանորեն խոսելուց հետո անհրաժեշտ է շեշտը դնել պատմավեպի վրա, քանի որ ուսումնասիրվող երկը՝ «Սամվել» վեպը, իր տեսակով պատմավեպ է։ Պատմավեպը վեպի կարևորագույն տարատեսակներից է և սկիզբ է առնում 19-րդ դարից ։ Պատմական վեպերում ներկայացվում է ժողովրդի կյանքի՝ կարևորագույն դեպքերով հագեցած այս կամ այն ժամանակահատվածը / Ռաֆֆու «Սամվել» (4-րդ դար), Մուրացան «Գևորգ Մարզպետունի» (10-րդ դար), Դ.Դեմիրճյանի «Վարդանանք» (5-րդ դար) վեպերը/։

Ուսուցիչը հիշեցնում է , որ հայ պատմավեպի առաջին հեղինակը եղել է Խ.Աբովյանը, որն իր «Վերք Հայաստանիի» անվանաթերթի վրա գրել է պատմական վեպ։

Վեպի ուսումնասիրությունից առաջ կատարված գրականագիտական այսպիսի աշխատանքները, լրացուցիչ տեղեկությունները աշակերտների մեջ հետաքրքրություն կառաջացնեն դեպի ուսուցանվող թեման։ Անհրաժեշտ է ապահովել հետադարձ կապ։ Այդ նպատակով դասի ավարտին, սովորածը պարզելու համար,հարմար է կիրառել «Դասի զեկուցող» հնարը։Այս պարզագույն հնարը շատ կարևոր դեր կարող է ունենալ սովորողներին դասապրոցեսում ընդգրկելու գործում։ Ուսուցիչն աշակերտներից մեկին նշանակում է դասի զեկուցող։ Վերջինս դասի ավարտից 3-5 րոպե առաջ ամբողջ դասարանին ամփոփ ներկայացնում է, թե ինչի մասին էր դասը, ինչ արեցին, ինչ սովորեցին։

1.2 Ռաֆֆու «Սամվել» պատմավեպի գրության շարժառիթները, պատմական հիմքը, սկզբնաղբյուրները, կառուցվածքը, սյուժեն

Գրողի երկարակեցությունը պայմանավորված է նրա գործերով, թե որքան արդիական է դրանց հնչեղությունը տարբեր ժամանակաշրջաններում, թե ինչքան է յուրաքանչյուր ժամանակ այդ գրողի գործերում գտնում հուզող հարցերի

պատասխանները: Հայ գրականությունը հարուստ է մնայուն և բոլոր ժամանակներում հնչեղությունը չկորցրած ստեղծագործողներով ու ստեղծագործություններով: Այդպիսին է Ռաֆֆին, որի պատմավեպերի արդիական խորհուրդը պատմության բարոյական դասերի՝ ազգային գոյության մեծ նվիրումի գաղափարի մեջ է: **«Պատմական վեպը մի ժողովրդի պատմական կյանքի նկարագիրն է : Նա պատկերացնում է յուր մեջ, թե որպես ապրել է և որպես գործել է մի ժողովուրդ, պատկերացնում է նրա բարքը, վարքը, սովորությունները, պատկերացնում է նրա մտավոր և բարոյական հատկությունները..»** [2,5]:

Ըստ Ռաֆֆու՝ պատմությունը կրկնվում է և պատմական անցյալի ու ժամանակակից դեպքերի միջև մի զարմանալի նմանություն կա: Հետևաբար պատմությունը ոչ միայն հայելի է , այլև ներկայի համար կարող է լինել խորհրդատու:

Նա իր պատմական գործերում ներկայացրեց հայոց նախնյաց մեծերի ազգանվեր գործերը, հայրենիքի ազատագրական ու կուլտուրական զարթոնքի առաքյալների ու նահատակների երազները, որոնք որպես օրինակ մեր օրերում էլ արդիական են: Առ այսօր չի լուծվել հայկական հարցը, որ դարավոր երազանք է հայ ժողովրդի համար, լուծում չի ստացել նաև Արցախի և արցախահայության կարգավիճակի հարցը: Այսօր էլ մեր հայրենիքի խաղաղությունն է վտանգված: Ուսումնասիրվող նյութը տոգորված է հայրենասիրական բարձր ոգով, քարոզում է սեր առ հայրենիք, նպաստում աշակերտների բարոյական արժեհամակարգի ձևավորմանը: Այն արդիական է ու կարևոր բոլոր ժամանակների համար:

19-րդ դարի 80-ական թթ. ցարական Ռուսաստանն ու Թուրքիան հայերի հանդեպ բացահայտորեն վարում էին ազգաձուլման քաղաքականություն: Գրաքննության տակ էին հայոց լեզուն, գրականությունն ու դպրոցը : Շիրվանզադեն վկայում է. **«Ռաֆֆիի մեջ այս կամ այն վեպի գաղափարը ծնվում էր կյանքի մեջ տեղի ունեցող քիչ թե շատ խոշոր երևույթների ազդեցությամբ : ... նրա գլխում հղացավ «Սամվել»-ի գաղափարը, որը ներշնչում էր նրան հայոց դպրոց-ների փակման խնդիրը: Նա ասում էր, թե պատմական անցյալի և ժամանակակից դեպքերի մեջ կա մի զարմանալի նմանություն: -«Սամվել»-ի կարդացողը կմտածի և անշուշտ կգտնի այդ նմանությունը,այն ժամանակ իմ գաղափարը հասկանալի կլինի նրան» [8,471]:**

Վեպի հիմքը ազգապահպանության գաղափարն է: «Սամվել» պատմավեպը հայրենասիրական ազնիվ մղումների երկ է և համարվում է հայ պատմավեպի գլուխգործոցներից մեկը ու դաստիարակչական առումով մեծ նշանակություն ունի, այդ պատճառով վեպի ուսուցումն անհրաժեշտ է ճիշտ կազմակերպել:

Ներկայացնենք «Սամվել» պատմավեպի ուսուցումը ԽԻԿ համակարգով , որի նպատակն է.

ա) Գաղափար տալ պատմավեպի գրության շարժառիթի, պատկերվող դարաշրջանի, պատմական հիմքի մասին

բ) Ուսուցանել վեպի կառուցվածքը, սյուժեն

գ) Բնութագրել հերոսներին՝ ներկայացնելով տարբեր իրավիճակներում, դրական կերպարների օրինակով հայրենասիրություն դաստիարակել ու բարոյական արժեքներ ձևավորել

դ) Կապ գտնել անցյալի և այսօրվա հետ , փորձել պատասխանել «Ես ինչպե՞ս կվարվեի» հարցին:

ե)նպաստել որոշակի կարողունակությունների ձևավորմանը

Նշվածներն իրականացնելու համար անհրաժեշտ է.

1. սովորողներին հնարավորինս ակտիվ ներառել ուսուցման գործընթացում,
2. ապահովել նրանց գործուն մասնակցությունը դասի յուրաքանչյուր փուլին և նրանց ուշադրությունը հնարավորինս կենտրոնացած պահել,
3. սովորողներին ուղղորդել ինքնուրույն աշխատանքներ կատարելիս,
4. ապահովել արդյունավետ հետադարձ կապ:
5. Խմբային կամ անհատական հետազոտական աշխատանքների կատարման միջոցով աշակերտների մեջ զարգացնել հաղորդակցվելու, համագործակցելու , թվային մեդիաներից օգտվելու և սովորելու կարողունակություններ:

Թեմայի ուսուցման ավարտին սովորողը **Կկարողանա՝**

- ներկայացնել «Սամվել» պատմավեպի բովանդակությունը, պատմական դարաշրջանը, աղբյուրները, դիպաշարը,
- ներկայացնել գրական երկի կառուցվածքը, մասերը,

- ապացուցել գրական երկի արդիականությունը՝ բերելով հիմնավոր փաստեր,
- ստեղծագործաբար վերարտադրել գրական երկի բովանդակությունը,
- բացատրել գրական կերպարի հոգեբանական զարգացումը,ներքին և արտաքին կոնֆլիկտները,
- առանձնացնել կերպարներին բնութագրող հատվածները՝ դրանք կիրառելով սեփական բնութագրումների մեջ,
- վերլուծել գրական կերպարի վարքագծերը։
- սովորողները կկարողանան խմբով հավաքել անհրաժեշտ ուսումնական տեղեկույթ, համակարգել, խմբագրել, քննարկել և ներկայացնել լսարանին։

Դասի նյութը՝ Ռաֆֆի , «Սամվել» պատմավեպը / պատմական հիմքը, գրության շարժառիթը , պատմական աղբյուրները,կառուցվածքը /

Ուսումնասիրման ընթացքում աշակերտը կթարմացնի իր գիտելիքները 350-70-ական թվականների պատմաքաղաքական իրավիճակի մասին։ Սովորողները հատուկ ուշադրության պիտի արժանացնեն 19-րդ դարի 80-ական թթ-ին բնորոշ սոցիալ-քաղաքական, մշակութային, կենցաղային երևույթներին։

Կփորձեն ընդհանրություն գտնել անցյալի և ներկա իրադարձությունների միջև։

Պարագաներ և տեխնիկական միջոցներ՝ Դասագիրք, «Սամվել» պատմավեպը, Աուդիոգիրք, համակարգիչ, պրոյեկտոր, ուսուցչի կողմից պատրաստված սահիկաշար և ինտերնետային կայք /Google Sites/, տետր, թղթեր, մարկերներ

Դասի ընթացքը՝

Կազմակերպվում է մտագրոհ « ՀԱՅՐԵՆԻՔ» հիմնաբառով.



Օգտագործելով նշված բառերն ու արտահայտությունները՝ աշակերտները գրում են 5-րոպեանոց շարադրանք: Կարդում են գրածները և եզրահանգում.ինչպես չեն ընտրում ծնողներին, բայց սիրում են նրանց և հարգում, այնպես էլ չեն ընտրում հայրենիքը, բայց սիրում են հող հայրենին և պատրաստ են նրա համար նահատակվել:

Իմաստի ընկալման փուլում սովորողները կուսումնասիրեն, կհամեմատեն սկզբնաղբյուրն ու վեպը, կգտնեն տարբերությունները, կուսումնասիրեն գրության ժամանակաշրջանը և 4-րդ դարի պատմական իրադարձությունները , որոնք իրենց արտահայտությունն են գտել վեպում: Ձևավորվում է 2 խումբ՝

1.Պատմագետների խումբ, որն ուսումնասիրելու է տվյալ ժամանակաշրջանին վերաբերող նյութերը և հանդես կգա ճանաչողական ելույթով / խմբի ներսում կարող են կատարել աշխատանքի բաժանում/: Խմբի անդամները կօգտվեն X դասարանի «Հայոց պատմություն» դասագրքի համապատասխան բաժնից (էջ 129-134), տեղեկություններ կհավաքեն համացանցից կամ կհամագործակցեն պատմության ուսուցչի հետ :

2.Գրականագետների խումբը կուսումնասիրի Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» և «Սամվել» վեպի միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները:

3.Մեկ սովորող կուսումնասիրի վեպի կառուցվածքը, ըստ տրված ուսումնական նյութի ՝ դասարանին կներկայացնի վեպի գլուխները

Տեղեկույթի աղբյուրները հիմնականում համացանցային կայքերն են, էլեկտրոնային գրքերն ու հանրագիտարանները: Առաջարկվում է օգտվել ուսուցչի կողմից Google Sites գործիքով ստեղծված «Ռաֆֆի.Սամվել» ինտերնետային կայքի ուսումնական նյութերից, սահիկաշարերից: Կարևոր է ուսուցչի ուղղորդումը, թե որ աղբյուրներից, ինչ ռեսուրսներից օգտվեն, ինչ տեղեկատվություն որոնեն ընտրված հարցի վերաբերյալ:

Կարծում ենք՝ հետազոտական աշխատանք կատարելը կհետաքրքրի սովորողներին, խթան կդառնա սովորելու , նոր գիտելիք ձեռք բերելու ,գիտելիքը

լսարանին բարձր մակարդակով ներկայացնելու համար: Աշակերտներն արդեն ընթերցել են բնագիրը,հաջորդ դասին կարող են ներկայացնել սյուժեն: Հանձնարարված աշխատանքները կատարելիս կարելի է օգտվել նաև սեղմավեպից:Կատարվում է անդրադարձ: Ուսուցման գործընթացը ներկայացնում են՝ պատասխանելով ի՞նչ, ինչու՞, ինչպե՞ս հարցերին:

Ի՞նչ	Ինչու՞	Ինչպե՞ս

Վեպի սյուժեի ուսուցումը կատարվելու է նոր մոտեցմամբ:

Պատասխանում են «Ի՞նչ է հայրենասիրությունը» հարցին: Լսվում են տարբեր կարծիքներ :Եզրահանգում են . Հայրենասիրությունը սեր է սեփական երկրի հանդեպ, ոչ թե ատելություն ուրիշի հանդեպ:

Հիշում են հայրենիքի մասին ասույթներ.



Իմաստի ընկալում: Սա դասի հիմնական փուլն է, որի ընթացքում իրականացվում է նյութի ուսուցումը: Փուլի հիմնական խնդիրներն են՝

- Նյութի բովանդակությունը հասցնել սովորողներին,
- Սովորողներին ներգրավել ուսուցման գործընթացին, գտնել նպատակահարմար մեթոդեր ու հնարներ, որոնցով սովորողները ինքնուրույն կկարողանան հետազոտել նյութը:

Վեպի սյուժեի ներկայացման ժամանակ կարևոր ուշադրության կարժանացնեն Արշակ Բ արքայի կերպարին, որ վեպի էպիզոդիկ , սակայն կարևոր կերպարներից է: Հայրենասիրությունը սկսվում է արքայից: Հանձին Արշակ Բ-ի Ռաֆֆին ներկայացնում է միասնական պետականության ձգտող ուժեղ պետական գործչի,որը

քիչ գործ չի արել երկրի հզորության ու հեղինակության բարձրացման համար: Ստեղծել կենտրոնացված հզոր պետականություն՝ ահա հայոց արքայի գործունեության հիմքը. «Ես ավելի բարձր եմ դասում Հայաստանի ամբողջությունը, քան հարյուրավոր առանձնացված իշխանություններ»[2, 210]:

Սովորողները նրան կներկայացնեն թե՛ հանրագիտարանային նյութով , թե Google sites գործիքով պատրաստված վեբ էջի նյութերով, համացանցի տեղեկույթով: Այնուհետև հայոց արքան կներկայացվի որպես վիպական կերպար, որ փակված է Անհուշ բերդում: Հետազոտելու են «Անուշ բերդ» գլուխը, դուրս են գրելու համապատասխան հատվածներ: Աշակերտները ներկայացնում են հայոց շղթայակապ արքային իր սիրելի սպարապետի պաճուճապատանքի հետ զրուցելիս, իրեն մտահոգող հարցերով կիսվելիս կամ էլ Դրաստամատի հետ զրույցում:

Գրականության տետրերում աշխատանքը պարտադիր է:

Կարծում ենք, որ այս աշխատանքներից հետո միայն կարելի է անդրադառնալ վեպի «Երկու սուրհանդակ» գլխին:Ռոմանտիզմին հատուկ խորհրդավորություն ունեցող այս գլուխը առաջարկվում է ուսումնասիրել՝ «Նախնական կազմակերպիչ» մեթոդի կիրառմամբ : Սա արդյունավետ մեթոդ է սովորողների հետաքրքրությունը շարժելու համար: Մեթոդի էությունը հետևյալն է. սովորողների ուշադրությունը կենտրոնացնելու և հետաքրքրություն առաջացնելու նպատակով ուսուցիչը նախապես պատրաստում է թեմայի հետ խիստ կապված սահիկաշար/ պրեզենտացիա/ և առաջարկում ուշադիր դիտել, որովհետև սովորողները ներկայացված նյութերը համեմատելու են իրենց ձեռք բերած տեղեկույթի հետ և կազմակերպելու են քննարկում:

https://docs.google.com/presentation/d/1EP03EaS_E8Ji105w3t7gIPsfyZEgTVCrtwpBwfg7TYE/edit?usp=sharing

Սահիկաշարի բաց թողնված հատվածները կլրացնեն սովորողները՝ վեպի կերպարներն ուսումնասիրելուց հետո:

Վեպի կերպարների ուսուցումը

Կերպարների վերլուծության ժամանակ անհրաժեշտ է պարզել յուրաքանչյուր աշակերտի դիրքորոշումը և գնահատականը վիպական իրադարձությունների և

կերպարների արարքների վերաբերյալ։ Կարո՞ղ է արդյոք ապրումակցել վիպական կերպարին, նրա տեղում իրեն պատկերացնել և պատասխանել «Ես ինչպե՞ս կվարվեի» հարցին։

Կերպարների ուսուցումը անհրաժեշտ է սկսել Սամվելի կերպարով։ Գլխավոր կերպարի բնութագրման ժամանակ անուղղակիորեն բնութագրվում են նաև էպիզոդիկ կերպարներից շատերը։ Կերպարի գործունեության և վարքագծի բնութագրման և վերլուծման ժամանակ ողջ վեպը հանգամանորեն վերլուծվում է, բացահայտվում են հեղինակի միտումները ։ Քայլ առ քայլ ներկայացնելով տեղի ունեցող իրադարձությունները՝ Ռաֆֆին կարողանում է իր իդեալ հերոսի խորհրդավորություն պարունակող «աղոտ միտքը» աստիճանաբար վերածել պատճառաբանված ու հիմնավորված գործողության։

Կերպարը կբնութագրվի հետևյալ պլանով

1. Ընթերցողի առաջին հանդիպումը գլխավոր հերոսի հետ

2.Սամվելի ժողովրդականությունը

2.Կերպարի գաղափարական և բարոյական դիրքորոշումը

3. Հերոսի ներքին դրաման և տագնապը

ա.Կերպարի ներքին խոսքը

բ.Կերպարի արտաքին խոսքը

գ.կերպարի գործողությունների դրդապատճառները

Սովորողները ուսումնասիրությունը կատարում են զույգերով։Նրանց աշխատանքը հեշտացնելու նպատակով ուսուցիչն իր ստեղծած «Ռաֆֆի.Սամվել» վեբ էջում տեղադրում է համապատասխան հատվածներ։

Սովորողները հասկանում են, թե ինչու է Ռաֆֆին նրա արարքը որակում որպես «նշանավոր գործ», որն «ապագայում օրինակ պիտի դառնար շատերին»։

Ուսուցիչը կարող է հիշեցնել Մամիկոնյան տոհմի մեկ այլ երիտասարդի՝Մուշեղ Մամիկոնյանի մասին։ Ռաֆֆին Մուշեղ Մամիկոնյանի միջոցով կերտել է իդեալ-կերպարը, որը մարմնավորում է վեհություն և

առաքինություն:Նա ոչ միայն վեպի,այլև հայ գրականության ամենահամակրելի ու հմայիչ կերպարներից է: Նա հմուտ զորավար է, խիզախ, անձնվեր, հայրենասեր:

Վեպում առանձնացող ու վառ անհատականություն ունեցող կերպարներից են Մերուժան Արծրունին,Շապուհը:

Ուշագրավ են կանանց կերպարները: Հայրենիքի սերը նրանց համար գերագույն արժեք է՝ սրբություն, ամեն ինչից վեհ: Նրանք հայ կնոջ,հայրենասեր կնոջ,հայ մոր հավաքական կերպարներ են:

Փառանձեմ- հայրենասեր տիկին, որի համար հայրենիքի ու պետության գոյությունն ու անվտանգության պահպանությունն ավելի գերադասելի արժեքներ են, քան սեփական կյանքը:

Վասպուրականի տիկինը՝ Մերուժանի մայրը, բացասական վերաբերմունք ունի դավաճան որդու նկատմամբ, որին չի ընդունում հայրական օջախի սրբազան հարկի տակ:Նա ուրացողին նույնիսկ իր որդին չի համարում, այլ դիտում է որպես հայրենիքի թշնամի, որի դեմ հանում է իր զորաբանակը:

Համազասպուհի, Աշխեն:

Կրպարների բնութագրման , համեմատության և վերլուծության համար կարելի է կիրառել Տ–աձև աղյուսակ,Վենի դիագրամ: Այս վերլուծությունները կօգնեն աշակերտներին ամբողջությամբ ընկալելու վեպը, իսկ ուսուցչին հնարավորություն կտան ստուգելու աշակերտների գիտելիքները:

Նյութի յուրացումը ստուգելու համար նպատակահարմար է կիրառել Բ. Բլումի «Երիցուկ» մեթոդը : Նշված մեթոդը հնարավորություն է տալիս պարզ, պարզաբանող կամ մեկնաբանող, բացատրող , ստեղծագործական, գնահատող և գործնական հարցերի միջոցով ոչ միայն պարզել նյութի ընկալումն աշակերտի կողմից, այլև հնարավորություն է տալիս նրանց քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացմանը:



«Զարմանք, անսպասելիություն» հնարի կիրառում թեմայի ավարտին։

«Ի՞նչ կլիներ, եթե վեպի գլխավոր հերոսը դու լինեիր և հայտնվեիր 4-րդ դարում»

«Ինչպե՞ս կվարվեին վեպի հայրենասեր հերոսները, եթե հայտնվեին մեր կողքին»

«Ի՞նչ եք կարծում, ինչպիսի՞ խորհուրդ կտան մեզ վեպի հայրենասեր հերոսները»

«Արշակ Բ արքայի խորհուրդը 21-րդ դարի հային »

Սովորողներին հանձնարարվում է ընտրել իրենց համակրած կերպարը և հանդես գալ նրա դերում՝ « Մեկ դերասանի թատրոն» :

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայոց ազգային գիտակցության հիմքը հայրենիքի գաղափարն է, որ միշտ արժևորել է մեր պատմության բոլոր փուլերը։Դարեր շարունակ հայը խնդիր է ունեցել պաշտպանել իր հայրենիքը, անաղարտ պահել իր լեզուն և մշակույթը։ Պատմական իրադարձություններն իրենց արձագանքն են թողել մեր պատմիչների ու վիպասանների երկերում։

Ուսումնասիրված մեծածավալ երկը՝ «Սամվել» պատմավեպը, այսօր նույնքան արդիական է, որքան անցյալում։ Երկի ուսուցումը նպաստեց մի շարք

դաստիարակչական բնույթի հարցերի լուծմանը, սովորողների ճանաչողական , տրամաբանական , համագործակցային, ստեղծագործական ու ինքնուրույն գործունեության կարողությունների ու հմտությունների զարգացմանը։

Ուսումնասիրելով պատմավեպը նոր մոտեցմամբ, կիրառելով ինտերակտիվ մեթոդներ և ՏՀՏ, համոզվեցինք, որ սովորողը կապվեց գրքին, կարողացավ համացանցից հավաքել իրեն անհրաժեշտ տեղեկույթ, ուսումնասիրել և վերլուծել, գրքի ու համացանցի նյութերը համադրելով՝ ելույթ նախապատրաստել և անաղարտ մայրենիով ներկայացնել լսարանին։

Պատմավեպի ուսուցումը նպաստեց միջառարկայական կապերի ամրապնդմանը / հայոց պատմություն, արվեստ/։

Թեմայի ուսուցման ընթացքում զարգացան սովորել սովորելու, լեզվական գրագիտություն, մշակութային կարողունակությունները, ձեռք բերվեց մեդիա գրագիտություն։

Ընտրված մեթոդներն ու մեթոդական հնարները տեղին էին, դրանք նպաստեցի ուսուցման արդյունավետության բարձրացմանը՝ ուսումնասիրվող նյութը դարձնելով հետաքրքիր ու տեսանելի։

Զարգացավ սովորողների քննադատական և ստեղծագործական մտածողությունը։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1..«Մայրենի»,» Հայոց լեզու», «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների փորձնական չափորոշիչ և ծրագիր, 2021

2. Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, 1986

3.Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1983,էջ 9-36

/Սարինյան Ս., Ռաֆֆու ստեղծագործությունը/

4. Ջրբաշյան Էդ., Գրականության տեսություն, Երևան, 1967 ,էջ 351

5. Խաչատրյան Ս. Ուսուցման արդյունավետ հնարներ , Երևան, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020, 74 էջ

6. . Ներսիսյան Վ. Մնացականյան Լ. ,Հայ գրականություն 10, Երևան, Մանմար 2021, էջ 110-114

7 .Դոլուխանյան Ա., Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Երևան,2006

8.Շիրվանզադե,հ.8, Երևան 1961, Հուշեր, էջ 461-501

9. Ձայնային գրքեր /Աուդիոգրքեր /

10.**https://docs.google.com/presentation/d/1EP03EaS_E8Ji105w3t7gIPsfyZEgTVCrtwpBwfg7TYE/edit?usp=sharing**

11. https://docs.google.com/presentation/d/1wItLX9zZ2FiS4OjBvcWq5BO7N0LctpMPB-rW8Z3Ff9w/edit?usp=sharing

12. Google sites. «Ռաֆֆի.Սամվել»

.